

Ապա ընծայեալները ստանալէ եւթ իշխանութիւն մատուցանելու Ս. Պատրարք, իրենց անդրանիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին:

Պատրիարք Սրբազն Հայոր իր յորդորական խօսքին մէջ ըստ «Խրախութեան եւ Ուխտի օր է այսօր, Սրբոց Յակոբեանց Միարանութեան եւ մեր ժողովուրդին համար»: Եւ յորդորեց նորընծաներուն յանախ անդրադանալ իրենց ուխտառութեան այս օրուան, մարով միշտ «մշակ առանց ամօրոյ»:

«Ողջոյնի» պահուն, Պատրիարք Սրբազն Հայոր եւ Հոգեւորական Հայորը մօտեցան ի համբոյր նորընծաներուն նորած Յակատին եւ աջին:

Պատարագի աւարտին, եկեղեցւոյ դասին մէջ, մինչ նորընծաները գրակալներու վրայ զետեղուած Աւետարաններու ընթերցումը կը կատարեն, դպիրեն եւ ժողովուրդը աշակամբոյրի մօտեցան:

- Կէսօրէ ետք, ժամերգութեան աւարտին, նորած ընծայեալները Պատրիարք Հօր ձեռամբ ստացան կուսակրուն բահանայի վեղարի օրհնութիւնը:

Իրիկնադէմին, Պարտիզաքաղաքի վարդապետաց Յաշասրահին մէջ, միարանութեան եւ աշակերտութեան մանակցութեամբ, տեղի ունեցաւ Միարանական ընթրիք: Նդան բարի մարդանի խօսեր, եւ նորընծայ Տ. Նորայր Արք. Գագագեան, իր օծակից եղբայրներուն անունով, իրենց երախտագիտութիւնը յայտնեց իրենց տրուած կրութեան համար, խոստանալով հաւատարմօրէն ծառայել Աստուծոյ եւ իրեւ անդամներ Սրբոց Յակոբեանց Միարանութեան:

Նորընծաները իրենց «Քառասունին» պատրաստութեան շրջանը պիտի անցընեն Բերդինելի Ս. Ծննդեան Տաճարին կից Հայոց Վանին մէջ:

ՎԱՆԻԿ ՎՐԴ. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

ԱՍՄԱՆԻ ԻՒԶՊԱՇԵԱՆ-ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ամմանի Իւզպաշեան-Կիւլպէնկեան Նախակրթաբանի եւ Մանկապարտէզի ամավերջի հանրէս տեղի ունեցաւ «Թերքա Սամբա» մշակութային կերպոնի սրահին մէջ, նախագահութեամբ Վերատեսուչ Գերք. Տ. Վահան Արք. Թօփալեանի: Նախակրթաբանը ունեցաւ 14 շրջանաւարտներ, որոնք նոյնացուցին յայտագիրը խմբերգներով, հայ եւ արար հեղինակներու քանաստեղծութեանց արտասանութիւններով, եւ իրենց սրտագեղ ելոյթներով, Հայերէն, Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով:

Նոյնպէս Մանկապարտէզի Մայիկ դասարանի աշակերտները իրենց ելոյթներով եւ երգերով խանդավառոցին ներկաները: Խակ վերջին բաժինին մէջ նախակրթանի աշակերտները աշակերտներուն եւ անդամներուն կատարուած աղօրքով:

Խմբերգները նոխացուցին յայտագիրը: Տնօրէնութեան անունով հանդէս կա գայ Տնօրէն Տիկին Նուարդ Ազգօքան: Խակ ուսուցիչներէն Պր. Ժիրայր Զգրգնեան իր սրտի խօսքը ուղղեց շրջանաւարտներուն, որմէ յետոյ Վերատեսուչ Սրբազնը իր տեղիկագութեամբ իր զմանաւանմէը յայտնեց ուսուցիչներուն եւ շրջանաւարտներուն, իրենց խոթամիտ աշխատանիքին եւ ձեռք բերած գրեացուցիչ արդիւմբներուն համար, եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Վարժարանի բարերարներուն եւ Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամներուն: Ապա պարգևատրեց շրջանաւարտները եւ բաշխեց վկայականները: Եւ հանդէսին վակումը կատարուեցաւ աղօրքով եւ «Հայրապետական Օրիներգով»:

Ս. Ս.